

# ԲԱՆԱՎԵՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ



## ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՅ ԱՌԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### Յ. Ղ. ՄԻՐԶՈՅԱՆ

Հայագիտական գրականության մեջ վաղուց քաղաքացիություն է ստացել այն տեսակետը, թե մեզանում առակագրությունը գրական ինքնություն ժանր է դարձրել Մխիթար Գոշը, իսկ այնուհետև շարունակել ու զարգացրել է նրա կրտսեր ժամանակակից Վարդան Այգեկցին: Օրինակ, Մ. Աբեղյանի կարծիքով, քանի որ գրականությունը հիմնականում եղել է «եկեղեցականների ձեռքին», ուստի չի զարգացել առակագրությունը, որովհետև հոգևորականն «իր կոչումով արդեն ընդունակ չէր մշակելու թեկուզ մի խոնարհ գրական տեսակ, ինչպիսին առակներն են: Դրանք մեր գրագետ եկեղեցականի կողմից ոչ միայն արհամարհված են եղել իբրև գեղջկական, ուստի և անարժեք բաներ, այլև իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված»<sup>1</sup>: Այսուհանդերձ, ականավոր հայագետը կարծիք է հայտնում, որ «12-րդ դարից սկսած՝ նա, ինչպես ուրիշ երկրներում, մշակում է նաև առակներ: Եկեղեցականն իր կոչումով ուսուցիչ էր, վարժ մեկնաբանությունների մեջ գործադրվող այլաբանական ձևին. նա ամեն առասպելի մեջ էլ տեսնում էր այլաբանություն. ուստի բնական է, որ նա սիրեր խրատական այլաբանությունը: Եվ սիրելով այդ, հոգևորականները վերջ է վերջո սկսում են ժողովել ամեն տեսակի պատմվածքներ, որոնց տալիս են խրատական այլաբանության ձևը, և որոնք մեր հին գրականության մեջ հայտնի են մի ընդհանուր **առակ** անվան տակ»<sup>2</sup>:

Հետևելով Մ. Աբեղյանին՝ Էմ. Պիվազյանը եզրակացրել է, որ Մխիթար Գոշը «**հայ առաջին առակագիրն է**»<sup>3</sup>: Տասնամյակներ անց նույն հեղինակը Գոշի առակների ժողովածուի կապակցությամբ գրել է. «XII դ. հայ գրականության մեջ մուտք է գործել ժող[ովրդական] բանարվեստի տեսակը՝ առակը, որն իր հետ բերել է նաև ժող[ովրդական] ոգի ու մտածողություն, ազդարարելով գրականության աշխարհականացման մի կարևոր փուլ»<sup>4</sup>:

Գժվար չէ տեսնել, որ հայ առակագրության սկզբնավորման հարցում առկա է ինչ-որ անորոշություն. հեղինակները նկատի են ունեցել միայն արձակ առակագրությունը, իսկ վերջինս դիտելով որպես «ժողովրդական բանարվեստի» տեսակ, դրանով իսկ բացառել են հայ գրականության մեջ դրա գոյությունը մինչև 12-րդ դարը:

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1970, էջ 183-184:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 184:

<sup>3</sup> Մխիթար Գոշ, Առակներ, տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը Էմ. Պիվազյանի, Եր., 1951, էջ 9:

<sup>4</sup> Էմ. Պիվազյան, Մխիթար Գոշ, «ՀՄՀ», հ. 7, Եր., 1981, էջ 630:

Որ հայագիտության մեջ առաջօր չկա հստակ պատկերացում հայ առակագրության սկզբնավորման ու զարգացման մասին, լավագույնս երևում է «Հայկական սովետական հանրագիտարան»-ի «Առակագրություն» բառհոդվածից, որի հեղինակ, հայ մատենագրության պատմության քաջագիտակ Հ. Անասյանը պարզորոշ ասում է, որ առակագրությունը Հայաստանում «սկիզբ է առել թարգմանական առակներով, որոնց գլխավոր կոթողներն են «Բարվախոս» («Բարոյախոս») և «Ոլիմպիանի (Ողոմպիանի) առակներ» կոչված ժողովածուները: Դրանք հունարենից թարգմանվել են V-VI դդ., ըստ ոմանց՝ VII դ.՝: Հայկական ինքնուրույն Առակագրությունը երևան է եկել XII դ.: Նրա գլխավոր ներկայացուցիչներն են Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին»<sup>5</sup>: Փոքր-ինչ անհասկանալի է, թե ինչու ականավոր հայագետը հայ առակագրության սկզբնավորումը իրավացիորեն կապելով թարգմանական գրականության հետ, ոչինչ չի ասում աստվածաշնչյան առակների մասին, որոնք, ինչ խոսք, անհամեմատ ավելի վաղ էին թարգմանվել, քան հիշյալ ժողովածուները: Չէ՞ որ եթե վերջիններիս թարգմանության ժամանակը ինչ-որ իմաստով չի ճշգրտված, ապա ստուգապես հայտնի է, որ V դ. 30-40-ական թվականների սահմանագծում Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի անմիջական ղեկավարությամբ արդեն իրականացվել էր «Աստվածաշնչի» հիասքանչ թարգմանությունը: Իսկ դա նշանակում է, որ հայ ընթերցողը մայրենի լեզվով կարող էր կարդալ ու յուրացնել ինչպես Հին Կտակարանի մարգարեական, այնպես էլ Նոր Կտակարանի քրիստոսաավանդ խորիմաստ առակները, իսկ հայ հոգևորականը՝ քարոզխոսության ժամանակ օգտագործել դրանք:

Նարեկացիագետ Պ. Խաչատրյանը հպանցիկ շոշափելով հայ առակագրության հետ Նարեկացու ունեցած առնչության հարցը, ըստ էության հետևում է հայագիտության մեջ ամրապնդված ավանդույթին և հայ առակագրության սկզբնավորումը կապում է Գոշի անվան հետ: Քննարկելով Նարեկացու անունով հայտնի «Ճառ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ ասացեալ» երկի հեղինակային պատկանելության հարցը՝ դրանից բերում է մի հատված և եզրակացնում. «Այսպես, թվում է, կգրեր նա, ով Գոշ ու «Վարդանգիրք» է կարդացել, ծանոթ է բարոյական հատկանիշների այն համակարգին, որի մասնավոր կրողները հայոց առականիում կենդանական աշխարհի տեսակներն են՝ վերածված այլաբանական կերպարների ու ընդհանրացումների: **Անշուշտ, Նարեկացին չա տեղյակ է ժողովրդական կենդանական վեպին, բայց Գոշով ու »Աղվեսագրքով« է, որ համակարգվում է հայ առակագրությունը՝ խորհրդանշային-ուսուցական իր դիմագծով»<sup>7</sup> (ընդգծ. իմն է - Հ. Մ.): Ակնհայտ է, որ հեղինակը մի կողմից կապ է տեսնում Նարեկացու և հայ առակագրության միջև, իսկ մյուս կողմից, տուրք տալով ավանդույթին, բացառում է Նարեկացու դերը հայ առակագրության համակարգի ձևավորման պատմական գործընթացում: Մինչդեռ գաղտնիք չէ, որ գիտության ու մշակույթի ցանկացած ոլորտում յուրաքանչյուր համակարգ**

<sup>5</sup> Օրինակ, այդ կարծիքին էր Մ. Աբեղյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 183):

<sup>6</sup> Հ. Անասյան, Առակագրություն, «ՀՍՀ», հ. 1, Եր., 1974, էջ 523:

<sup>7</sup> Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք առաջին, Մ. Էջմիածին, 1996, էջ 135-136:

վերջնականապես ձևավորվելուց առաջ անցնում է լինելության որոշակի ժամանակաշրջան, որը ոչ պակաս կարևոր նշանակություն ունի տվյալ համակարգի կայացման գործում, քան բուն համակարգաստեղծման գործընթացը: Հետևաբար, յուրաքանչյուր համակարգ ճիշտ հասկանալու և գնահատելու համար հարկ է ուսումնասիրել նաև նրա լինելության ընթացքը:

Չպետք է մոռանալ, որ առակագրությունը ունի ոչ միայն արձակ, այլև չափածո դրսևորում: Իսկ քանի որ Գոշն իր առակները շարադրել է արձակ՝ դառնալով հայ գեղարվեստական արձակ գրականության հիմնադիրը, ապա իրավամբ հարց է ծագում. ե՞րբ է մեզանում սկզբնավորվել չափածո առակագրությունը:

Նախքան այս հարցին պատասխանելը, տեսենք, թե ինչ էին հասկանում հնում առակ ասելով: Հայկազյան լեզվի բառգրքի «Առակ» բառհոդվածում կարդում ենք. «Առած նմանաբանական, կամ այլաբանական. բան ինչ ի մէջ առեալ ի նշանակել զայլ ինչ. խորհրդատր նմանութիւն. և Պատմութիւն, առեղծուած կամ առասպել յարմարեալ ի խրատ, կամ ի զարթուցանել զլսելիս առ ի քննել զգաղտնութիւն իրաց...: Առեղծանելիք. մթին ասացուած, որպէս հանելուկք...: Օրինակ. ձև. յարացոյց. եղանակ. տիպ...: Ինչ մի առաջի եղեալ ի տեսիլ ամենեցուն, կամ առարկայ հանդիսի..., որպէս Ջրոյց հասարակաց. առած..., որպէս Առակ նշուակի. նշուակ. ծանականք. դսրովանք. նախատիւնք. խայտառակութիւն. և խայտառակ»<sup>8</sup>: Նույն բառգիրքը **Առակեմ** բառի համար տալիս է հետևյալ բացատրությունը. «Առակս ի մէջ առնուլ.առակաւորել. առակաւ խօսիլ. առակաւ նշանակել. նմանութեամբ յայտնել. նմանեցուցանել. յարմարել. այլաբանել», նաև՝ «խայտառակել. մերկանալ զամօթալիս. նշուակել յանդիման առնել ի նշուակ»<sup>9</sup>:

Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության և հատկապես «Մատենանոցի պատմության» ստեղծագործության մանրագնի հետազոտությունը ցույց է տալիս, որ բանաստեղծը արտահայտել է առակագրության մասին մի շարք հետաքրքիր դատողություններ, լայնորեն օգտվել Հին և Նոր Կտակարանների առակներից, փորձել է ստեղծել չափածո առակներ: Իսկ դա նշանակում է, որ մեզանում չափածո առակագրությունը սկզբնավորվել է արձակ առակագրությունից անհամեմատ ավելի վաղ:

Իսկ ի՞նչ հիմքեր ունենք նման համարձակ պնդման համար: Նախ ասենք, որ հայ մատենագրության մեջ հազիվ թե գտնվի մեկ այլ հեղինակ, որն իր ասելիքը արտահայտելու համար այնպես առատորեն օգտված լինի առակներից ու առակագրությունից, որքան Գրիգոր Նարեկացին: Դրսևորելով առակի շատ լայն ըմբռնում՝ բանաստեղծը առակ է համարում ոչ միայն Մողմոնի անունով հայտնի, ինչպես նաև Ավետարաններում սփռված առակները, այլև Հին Կտակարանի մի շարք գրքերում (Ելից, Դ թագավորաց, Երեմիա, Յովել, Սիրաք, Եզեկիել և այլն) շարադրված բազմաթիվ նյութեր: Օրինակ, Մատյանում կարդում ենք՝ «Ըստ Մովսեսեան յանդիմանութեանն առակի» (Բան Ե, տ. 54, հմմտ. Օրենք, ԼԲ, 6), «Ըստ մարգարէին յայտնի առակի / Եւ չարութիւնս իմ ոչ հալեցաւ» (Բան ԿԹ, տ. 9-10, հմմտ. Երեմ., 2, 29), «Յառակս հինից եւ չարաց հոգոց, - / Յիս ինքն տնկեցի» (Բան ԻԱ, տ.

<sup>8</sup> «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա, Եր., 1979, էջ 283:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 284:

28-29, հմմտ. Յովէլ, Ա, 4), «Յնդեցան ջրոյն առակաւ» (Բան ՂԲ, տ. 105, հմմտ. Ելք, ԺԳ, 15-31) և այլն: Ավելին, գրեթէ բոլոր սաղմոսները վերաշարադրում է որպէս առակ: Օրինակ, Մատթանի Կ բանում հիշեցնելով ԽԹ սաղմոսի 16-րդ համարը, բանաստեծը գրել է.

*Եւ արդ, որպէս զի ոչ վայել է արհնաբանութիւն ի բերան  
մեղաւորի,  
Ի ճշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ,  
Ձիա՞րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս  
բազմապատկառ,  
Որ հանապազ ընդունիմ անէծս ի սաղմոսիս բարեբաստութեան:*

Այնուհետև այս նույն գլխում նույնպիսի ձևով բերում է Սաղմոսի ավելի քան քառասուն տեղի՝ առանց կրկնելու առակ բառը: Գրեթէ նույնն ենք տեսնում նաև հաջորդ՝ ԿԱ գլխում, որտեղ, հիշեցնելով հարյուրերորդ սաղմոսի 8-րդ համարը, այն անվանում է առակ: Բանաստեղծը գրում է.

*Ձիա՞րդ, ըստ իրաւախորհ արդարոյն,  
Ընդդէմ մեղաւորացն մահու զինեցայց **առակաւ առաւապիւն**  
Ի սկիզբն արթնութեանն միշտ պատրաստական լինելոյ,  
Որ եւ ոչ զանդամս մարմնոյս զանեալ խրատեցի:*

Իսկ այն հարցին, թե ինչու են Սողոմոնը և մյուս հեղինակներն իրենց ասելիքն արտահայտելու համար դիմել առակի ժանրին՝ որպէս զործող անձ ընտրելով կենդանիներին, բանաստեղծը փորձել է պատասխանել դեռևս ստեղծագործական վաղ շրջանում գրած «Երգ երգոցի մեկնություն» աշխատության մեջ: Նրա կարծիքով դա տեղի է ունեցել երեք պատճառով. 1. ճանաչողության առարկայի դժվարամատչելիության՝ «զանճառելիսն կամեցեալ պատմել Սողոմոնի՝ ի մարմնաւոր իրս առակեաց», 2. ունկնդիրների կամ ընթերցողների տհասության՝ «մի՛ տայք տկար լսելեաց զանճառելիսն»<sup>10</sup>, 3. ճանաչողի, այսինքն՝ հեղինակի թերիմացության՝ քանի որ Սողոմոնը «ճշմարտապէս ոչ ծանեաւ զբովանդակն, և ոչ ծանուցանել մարթաց. և ոչ զոր ինքն գիտաց, մեզ յայտնի յայտ եբեր, այլ առակաւ»<sup>11</sup>: Այստեղից հետևում է, որ առակի միջոցով ստանում ենք ոչ թե ակնհայտ ու լրիվ, այլ անուղղակի և ոչ ամբողջական գիտելիք: Բանն այն է, գրում է Նարեկացին, որ, ինչպէս Տերն ասաց Ավետարանում, «Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց», այնպէս էլ «նոյն հոգի ուսոյց Սողոմոնի՝ մի՛ յայտնապէս սփռել զորս ետես հոգով լուսոյն. և մի՛ ամենկին թագուցանել զխորհուրդ եկեղեցւոյ»<sup>12</sup>: Փաստորեն բանաստեղծն ընդունում է եկեղեցու մասին գիտելիքներ տալու կամ ստանալու մեկ հիմնական եղանակ՝ ամեն ինչ չասել բացահայտ և ոչ էլ ամեն ինչ թաքցնել: Իսկ դա հնարավոր է անել երկու եղանակով՝ ուղղակի պատմելով և առակախոսությամբ: Հետևաբար, որքան էլ կատարյալ լինեն դրանք, միևնույնն է, հանդերձյալ կյանքի մասին տալիս

<sup>10</sup> «Մրրոյ հօրն մերոյ Գրիգոր Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք», Վենետիկ, 1840, էջ 273: Այսուհետև այս հրատարակությունից հղումներ կատարելիս նշելու ենք միայն՝ **Գրիգոր Նարեկացի**, Մատենագրութիւնք, և էջը:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 274:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 273:

են անլիարժեք գիտելիքներ: «Արդ ծանիր,- գրում է նա,- յաստուածաբանի ասելոյս թէ զամենայն **գոր ինչ խօսեցան և գոր ինչ ուսուցին մեզ գիրք, օրէնք և մարգարէք և աւետարանն՝ որ է Քրիստոս, և առաքեալք և վարդապետք յայտապատումք և առակախօսք, անկատարք են և թիւրք առ հանդերձեալ ուսումն»<sup>13</sup> (ընդգծ. իմն է – Հ. Մ.): Ըստ այդմ ստեղծվել է առակախօսութիւնը՝ որպէս նման գիտելիքներ տալու լավագոյն եղանակ:**

Ավելի վաղ գրած «Համառօտիք բան խրատու» բարոյափիլիսոփայական մեծարժեք երկասիրության մեջ առակի սկզբնավորման մասին բանաստեղծը կատարում է մեկ ուրիշ հետաքրքիր հարցադրում. ինչու՞ են առակները սովորաբար հորինվում կենդանիների վերաբերյալ: Պատճառն այն է, գրում է նա, որ աստվածապատկեր էությանը վիրավորական խոսք ասողը, առավել ևս հայիոյողն Աստծո կողմից կարժանանա խստագոյն պատիժների. «Ձի եթէ յիմար և մորոս ասել եղբօրն՝ ըստ տեառն բանին պարտաւոր առնէ գեհեմին, ո՞րչափ ևս առաւել զանհնարին և զդժնդակ ամենայն լսելութեան՝ անարգանաց և նախատանաց բանսն որպէս ի դժոխոց յանգականեալ մտացն և ի լեզոյն զգայեղով. մինչ զի անասնոց և զազանաց առականօք անարգեն, զի պատկեր աստուծոյ եղեալ մարդն. որով զնախատիպն աստուած շարժեն ի վերայ ինքնեաց ի բարկութիւն և ի վրէժխնդրութիւն»<sup>14</sup>:

Թեև Գրիգոր Նարեկացին առակին դիմում է իր բազմաթիվ ստեղծագործություններում, բայց առակի ու առակագրության հանդէպ նրա ցուցաբերած բացառիկ հետաքրքրությունն իր լավագոյն դրսևորումը ստացել է «Մատեան ողբերգութեան» երկում: Բավական է ասել, որ, ըստ Մատյանի համաբարբառի, Նարեկացին միայն **առակ** բառը այնտեղ գործածել է քառասուներկու անգամ<sup>15</sup>: Ավելին, բացի առակ բառից Մատյանում հանդիպում են նաև առակ արմատով կազմված մի շարք բառեր. **առականք** (2), **առակարկութիւն** (1), **առակաւոր** (2), **առակեմ** (1), **առակիմ** (1) և **առակող** (8): Իսկ որ շատ կարևոր է, հիմք ունենք ասելու, որ Նարեկացին է ստեղծել **առակագրություն** բառը, որը Հայկազյան լեզվի բառգրքում վկայված է միայն Մատյանից բերված երկու և Լամբրոնացու մեկ օրինակով: Առաջին դեպքում բանաստեղծը Մատյանի ԽԸ բանում գրել է.

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 365-366:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 521-522: Ի դեպ, թեև այս երկի հեղինակային պատկանելության հարցը մինչև վերջերս մնում էր վիճելի, իսկ Պ. Խաչատրյանը փորձել է այն վերագրել Գրիգոր Բ Վկայասերին (տե՛ս Պ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 137-150), բայց մեր ուսումնասիրությունից պարզվել է, որ այն անվերապահորեն պատկանում է Գրիգոր Նարեկացուն և ժամանակագրորեն նախորդում է 977թ. գրված «Երգ երգոցի մեկնություն» երկին (տե՛ս Հ. Պ. Միրզոյան, Գրիգոր Նարեկացու գրական ժառանգության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համակաթարանի», 2004, թիվ 1, էջ 67-85): Մեր տեսակետը միանշանակ պաշտպանել է Նարեկացու գրական ժառանգության քաջագիտակ Հր. Թամրազյանը (տե՛ս Հր. Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, Եր., 2004, էջ 76-77, **նույնի՛**՝ Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքը, Եր., 2005, էջ 31-32): Մենք ունենք նույնը հաստատող լրացուցիչ փաստեր ևս, բայց հարկ չենք համարում բերել դրանք՝ հարցը համարելով լուծված:

<sup>15</sup> Տե՛ս «Հայկական համաբարբառ 8, Նարեկացի 1», կազմեց Ժորա Բաբկենի Թոսունյանը, Եր., 1975, էջ 155-156:

*Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմեալսն նորոգեսցես,  
Որ ամենահամ, ախորժաճաշակ, բազմապաճոյճ առակագրութեամբ  
Չաստուածութիւնդ քո բարոգեալ ի մատեան լուսագարդ կրակի,  
Եկեղեցոյ ընծայեաց հետս բարութեան՝  
Խոստովանութեամբ մատչել առ քեզ, Հայր:*

Երկրորդ անգամ բառս գործածել է Մատյանի ԳԳ գլխում (տ. 300-301)՝ գրելով. «Քանզի **յոզնապաճոյճ պճնութիւն բանին** Եզեկիելի առ իմանալին փարաւոն **հենգնաւոր առակագրութեամբ, ողբականաւ շարայարմարեալ**» (ընդգծ. իմն են – Հ. Մ.): Ինչպէս տեսնում ենք, բերված հատվածները վերաբերում են Սողոմոնի «Առակաց գրքին» և «Եզեկիելի մարգարեությանը», որոնք գնահատված են միանգամայն տարբեր ձևով. եթե Սողոմոնի առակներն անվանում է «**ամենահամ, ախորժաճաշակ, բազմապաճոյճ**», իսկ ամբողջ գիրքը՝ «**մատեան լուսագարդ կտակի**», ապա Եզեկիելի խոսքը որակում է «**յոզնապաճոյճ պճնութիւն բանին**», իսկ առակները՝ «**հենգնավոր..., ողբականաւ շարայարմարեալ**»: Դիտելի է և այն պարագան, որ Սողոմոնի առակները որակելով դեռևս Պիտոյից գրքից եկող «**բազմապաճոյճ**» բառով՝ Եզեկիելի առակները գնահատելու համար ստեղծել է նույնի հոմանիշը՝ **յոզնապաճոյճ**, որը Հայկազյան լեզվի բառգրքում վկայված է միայն հենց այս օրինակով:

Նարեկացին միանգամայն նոր մոտեցում է ցուցաբերում առակի գրական գործածության հարցում. բանն այն է, որ եթե Նարեկացուց առաջ ու նրանից հետո բոլոր առակագիրները դիմել են առակի ժանրին այլոց հասցեագրված իրենց մտքերն ու գաղափարներն այլաբանորեն արտահայտելու համար, ապա Նարեկացին, ընդհակառակը, օգտագործում է ուրիշների հորինած առակները հենց իր մասին որոշակի տեղեկություններ հայտնելու նպատակով: Այդ պատճառով, ասես չբավարարվելով մինչ այդ հայտնի առակներով, բանաստեղծն ինքն է հորինում նոր առակներ: Ընդ որում, թե մեկ և թե մյուս դեպքում առանց բացառության ինչ-որ ձևով հասկացնում է, որ տվյալ առակը վերաբերում է հենց իրեն: Փաստորեն Նարեկացին էապես ընդլայնել է առակագրության գրական գործառնության շրջանակները՝ առակները դարձնելով այլաբանորեն ինքնակենսագրական տեղեկություններ հայտնելու հիմնալի միջոց: Հետևաբար Մատյանում բերված առակները պետք է դիտարկել որպես բանաստեղծի կյանքի ու գործունեության բացահայտման հուսալի աղբյուր: Օրինակ, Մատյանի ԺԵ բանում կարդում ենք.

*Իսկ կրկին առակն, որ **առ իս**,  
Որ ոչխարին տրուպն տարացուցի,  
Որ յետին անզգայութեանն էր մատնեցեալ, մոլորեալ,  
Եւ ի լերինն, ուր ոչ է այցելութիւն,  
Ընդ գազանականացն դիւաց եւ կռոցն վայրենութեան թափառեալ,  
Ո՛չ մերձաւոր գոլ սակաւ մի հաւտին:  
Ո՛չ **բան ունէի**, որով եւ զցաւոցն **աղէպ պապունէի**,  
Ո՛չ ձեռն ձգողական, որ համերցն է ազդողական:*

Ինչպէս տեսնում ենք, բանաստեղծը ոչ միայն շեշտում է, որ ավետարանական մոլորյալ ոչխարի առակը վերաբերում է հենց իրեն, այլև նույնը

կրկնում է՝ ասելով. «Ո՛չ **բան ունէի**, որով եւ զցաւոցն աղէտ **պատմէի**»: Այս առակով բանաստեղծը կամեցել է ընթերցողին հայտնել, որ ինչ-որ ժամանակ ինքը եղել է այնքան դառնացած, զայրացած ու մարդկանցից հիասթափված, որ առժամանակ խույս է տվել նրանցից և մեն-մենակ թափառել հայրենի երկրի սարերում: Իսկ թե ինչն էր դրա պատճառը և մոտավորապես երբ է դա տեղի ունեցել, արդեն այլ հարց է<sup>16</sup>:

Առակների այսօրինակ մասնավորեցումը սովորական երևույթ է Մատյանում: Ահա դրանցից մի քանիսը. «**Առ իս** ելանեն առածք աստուածաբեալ սուրբ մարգարէիցն» (Բան Ե, տ. 69, տե՛ս Ես., Ե, 2-4, Երեմ., Բ, 21), «Ի վրանս հովուացն, ըստ Երգոյն երգոց **առ իս** առակին» (Բան ԽՁ, տ. 7, տե՛ս Երգ երգոց, Ա, 7), «Ըստ տեսանողին **առ իս** առածի» (Բան ԾԳ, տ. 45, տե՛ս Ամովս, Թ, 7), «Ի ճշմարիտն առակէ կանխաւ իսկ **ուսայ**» (Բան Կ, տ. 2, տե՛ս Մաղմ., ԽԹ, 16), «Իբր որորմագին առակ ընչեղին **ինձ** վարդապետէ» (Բան Հ, տ. 15, տե՛ս Ղուկ., ԺՁ, 19-26) և այլն:

Այլոց առակներն օգտագործելիս բանաստեղծն անպայման որևէ ձևով հայտնում է աղբյուրը (հեղինակ, աշխատություն, նույնիսկ գլուխ, Մաղմուսի համար ևն): Չնայած բծախնդրության հասնող ճշգրտությանը՝ այնուամենայնիվ Մատյանում կա մի քանի առակ, որոնց համար բանաստեղծն այդօրինակ ոչ մի հղում չի կատարում: Մնում է ենթադրել, որ դրանք հորինել է հենց ինքը, իր մասին որևէ տեղեկություն հայտնելու նպատակով: Մատյանի Բան Թ-ի Բ ենթագլխում կարդում ենք.

*Ծառս ամբարձուղէշ, ստուարաստեղն,  
Տերեւալից՝ ունայն ի պտղոց,  
Նմանակից յաւէտ հարազատ այնր թզենոյ,  
Ձոր տէրն գաւսացոյց:  
Քանզի սաղարթաւք վարսից,  
Այս է՝ արտաքին դիմաւք բարեշուք կերպից,  
Իբր պսակաւ իմիք պաճուճեալ  
Բացականացն գոս բաղձալի,  
Իսկ եթէ մերձեսցի տնկողն խուզել զխնդրելին,  
Գտցէ գրեզ ունայն ի բարեսց  
Եւ գարշելի ի գեղեցկութեանց՝  
Ծաղր տեսողաց եւ նշաւակութիւնք նախատողաց:  
Ձի եթէ ապաժաման յանզգոյշ ժամուն  
Հերասպանձ տունկն պտղակորոյս, անկենդան,  
Որ դոյզն պատկեր է անպատրաստից,  
Եկն ընդ անիծիւք,-  
**Եւ կամ երկիր, ոռոգեալ ցաւոյով,  
Եւ ոչ բազմապարիկ գաւանդս արգասեաց  
Երկրագործութեան փաժողացն մապուցանէ՝  
Լքեալ մոռանի,-  
Իսկ դու, ո՛վ անչն իմ եղկելի,***

<sup>16</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Հ. Ղ. Միրզոյան**, Նարեկացու առեղծվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, թիվ 1:

*Մահման բանաւոր եւ տունկ կենդանի,  
Եւ ոչ ի ժամու իւրում պտղաւոր,  
Ի՞բր ոչ զնոյնն կրեցես պատիժ նախնում առակիդ:*

Բանաստեղծն այստեղ իրեն ակնհայտորեն համեմատում է անիծված թզենու հետ, որը անպատեհ ժամին պտուղ չունենալու պատճառով անիծվեց Քրիստոսից և անմիջապէս չորացավ: Չբավարարվելով դրանով՝ ստեղծել է նաև լքված դաշտի առակը: Վերջինիս հեղինակային պատկանելութունը երևում է այն բանից, որ նախ՝ բանաստեղծը դիմում է իր անձին՝ ասելով. «Իսկ դու, ո՛վ անձն իմ եղկելի»: Երկրորդ, «**նախնում առակիդ**» արտահայտությամբ արդեն հասկանում է ոչ թե թզենու, այլ իր իսկ հորինած՝ լքված ու մոռացված դաշտի առակը: Այն առերևույթ հիշեցնում է «Առակաց գրքի» լքված արտի առակը (24, 31), բայց էապէս տարբերվում է նրանից, որովհետև առակողն ասում է, որ «Եթէ անխնամ թողնես, խոպան կը դառնայ արտը, ամենուր մոլախոտ կը բուսնի, **այն կը մնայ լքուած**, գետին կը թափուեն նրա ցանկապատի քարերը»: Մինչդեռ Նարեկացին նկատի ունի ճիշտ հակառակ դեպքը, այսինքն՝ երբ երկրագործը խնամում է արտը, բայց բերք չստանալու պատճառով լքում է այն: Փաստորեն թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում գործ ունենք արտի լքման երևույթի հետ, բայց տարբեր են պատճառները: Այստեղից հետևում է, որ նախորդի մմանությամբ բանաստեղծը ստեղծել է իր վիճակն արտահայտող, այսինքն՝ իրեն պատշաճող տարբերակ:

Որ իսկապէս լքված դաշտի առակով բանաստեղծը հայտնել է տվյալ պահին եկեղեցուց մերժված իր վիճակը, որը համարժեք է եկեղեցուց լքվածության, պարզեիպարզ երևում է նախընթաց Ը բանից, որը բաղկացած է ընդամենը երկու ենթագլխից: Դրանցից առաջինում շատ մնայլ գույներով ներկայացնելով իր «կորուսեալ» ու «մեղաւոր» անձի ծանր վիճակը՝ երկրորդ ենթագլխում գրում է.

*Եւ քանզի կառուցեր քեզ **անել արգելան** եւ **անփախչելի որոգայթ**՝  
Խոստովանեալդ քեզէն **զանբժշկականդ քո վէր**  
Եւ **զանարիւնակդ քո հարուած**,  
Վկայելով **զանձինդ պարտական մահու զանբուժելիդ բեկութիւն**,  
**Ո՛վ չարդ ի բարեաց**,  
**Ո՛վ դառնութիւնդ ի քաղցրութեանց**,  
**Ո՛վ խաւարդ ի լուսազարմից**,  
**Ո՛վ կապտեալդ ի պճնելոց**,  
**Ո՛վ դարովեալդ ի գովելոց**,  
**Ո՛վ ամբարիշտդ ի բարեպաշտից**,  
**Ո՛վ շնչականդ ի բանականաց**,  
**Ո՛վ անմիտդ ի մտաւորաց**,  
**Ո՛վ անհանճարդ յիմաստնոց**,  
**Ո՛վ անմաքուրդ յընփրեղոց**,  
**Ո՛վ մահացուդ ի կենդանեաց**,  
**Ո՛վ խոհերականդ ի սրբոց**,  
**Ո՛վ արբշիռդ ի պարկեշտից**,  
**Ո՛վ կեղծաւորդ յարդարոց**,*



*Ո՛վ անպիտանդ ի պիպանեաց,  
Ո՛վ անարգդ ի փառաւորաց,  
Ո՛վ նուագդ յառաւելութեանց,  
Ո՛վ գերիդ ի գերագունից,  
Ո՛վ նուաստագոյնդ ի վեհից,  
Ո՛վ աղքատդ յընչեղաց,  
Ո՛վ անարժանդ ի փրկութեանց,  
Ո՛վ տնանկդ ի բարչրութեանց,  
Եւ ի հոգևոր հարսութեանց,  
Եւ հապրածեալդ յարհնելոց:*

Բերված հատվածի քննությունից պարզվում է, որ բանաստեղծն ինքն է իր համար կառուցել «անել արգելան եւ անփախչելի որոգայթ», ուստի խոստովանում է իր անբուժելի վերքը և ստացած անօրինակ հարվածը: Այդ պատճառով իր անձը համարում է մահվան արժանի, իսկ բեկումը՝ **անբուժելի**: Այնուհետև քսաներկու գույգ հակադիր հասկացություններով նկարագրում է ներկայում և անցյալում իր ունեցած վիճակները: Դրանցից ամեն մեկը լինելով շատ կարևոր՝ առանձնապես ուշագրավ են վերջին տողերը, որոնցում իրեն անվանում է **»տնանկդ ի բարձրութեանց«** և **»ի հոգևոր հարստութեանց«**, նաև՝ **»հատրածեալդ յարհնելոց«**, այսինքն՝ բարձունքից և հոգևոր հարստությունից զրկված ու օրհնվածներից կտրված: Ահա հենց այս նույն վիճակն է վերը բերված առակով արտահայտել բանաստեղծը:

Նույնանման մեկ ուրիշ առակ հանդիպում է Մատյանի ԾԴ բանում: Այստեղ բանաստեղծն ասում է, որ ինքը՝ փոթորկված ծովում բազմավտանգ ալիքներից սաստիկ զգված ու լլկված, տագնապահար նավարկելիս հանկարծակի հայտնվել է գարնանագայր գետի ամեհի ալիքների մեջ, որտեղից մի կերպ ասի է շարտվել ջրահեղձ, անշնչացած ու համրացած: Ըստ այդմ գրում է.

***Այսու առակաւ եւ ես՝ եղկելիս.**  
Խաւսին՝ եւ ոչ իմանամ,  
Գոչեն՝ եւ ոչ ինչ լսեմ,  
Բարբառին՝ եւ ոչ զարթնանամ,  
Հնչեն՝ եւ ոչ փոխադրիմ,  
Փողեն՝ եւ ոչ գումարիմ,  
Վիրատրիմ՝ եւ ոչ եւս զգամ,  
**Կողցն զարշութեան նմանեալ՝**  
**Թափուր յազդմանէ բարեաց իմաստից:***

Ինչպես տեսնում ենք, բանաստեղծը միանշանակ գրում է, որ տվյալ առակը վերաբերում է հենց իր եղկելի անձին: Երկրորդ, չի նշում, թե ով է տվյալ առակի հեղինակը: Ուստի կարող ենք ենթադրել, որ հենց ինքն է հորինել այն, որովհետև, ինչպես արդեն ասվել է, այլոց ստեղծած առակներն օգտագործելիս անպայման ինչ-որ ձևով հայտնում է հեղինակի անունը կամ հասկացնում է նրա ով լինելը: Երրորդ, դիտելի է, որ եթե ավետարանական մոլորյալ ոչխարի առակի դեպքում իր վիճակի համար ասում էր. «Ընդ գազանականացն դիւաց եւ կողցն վայրենութեան թափառեալ», ապա գրեթե նույնն է կրկնում այստեղ՝ **«կողցն զարշութեան նմանեալ»**: Չորրորդ,

լքված ու մոռացված արտի առակի «Գտցէ քեզ ունայն ի բարեաց» մտքի փոխարեն այստեղ իրեն համարում է՝ «**Թափուր** յագղմանէ **բարեաց իմաստից**»: Փաստորեն «**ունայն ի բարեաց**» և «**թափուր** յագղմանէ **բարեաց իմաստից**» արտահայտություններն ըստ էության նույն բանն են նշանակում:

Նարեկացիական առակներից ամենաուշագրավը, իմ կարծիքով, Կ բանում գետեղվածն է: Մատյանի այս գլխում որպես առակ վերաշարադրելով Դավթի Սաղմոսի բազմաթիվ մտքեր՝ Բ ենթազվիսի վերջում բանաստեղծը գրում է.

*Բայց եւս անբանական բարոյից է  
Ասուն կենդանեաց ի մէջ դալարոց  
Ծաղկածին վայրից կենսածիր բանից՝  
Թմբբութեամբ մտաց ի յարատս մահու ճարակել:*

Որպես խիստ վերացական ու ընդհանրական խոսք, առերևույթ թվում է, թե ոչ մի կապ չունի բանաստեղծի անձի հետ: Բայց քանի որ բանաստեղծը դա հորինել է հենց իր վիճակը նկարագրելու համար, ուստի հաջորդ ենթազվիսի սկզբում տալիս է դրա բացատրությունը հետևյալ ձևով.

*Եւ արդ, քանզի իմ է առակս վերջին կշտամբողական,  
Եւ առ իս ակնարկէ գղիպուածոցն չար պատահմունս,  
Որ ինձէն անձին նիւթեցի միշտ գեղմունս կիզանողականս  
հրոյ տոչորման՝  
Հոսեալ ի յերկնուստ զգոյի զագաթանս՝ իմաստնարանի  
բազմակիս:*

Փաստորեն բանաստեղծը միանշանակ ասում է՝ «իմ է առակս վերջին կշտամբողական», որը ակնարկում է իր հետ պատահած այն չար դիպվածների մասին, որոնք ինքն է նյութել իր դեմ: Դժվար է պատկերացնել, թե գեղարվեստական բարձրարվեստ ստեղծագործության մեջ ուրիշ ինչպես պետք է բանաստեղծը ձևակերպեր այս պարզ միտքը, որպեսզի կարողանայինք հասկանալ կամ ընդունել, որ բազմաչարքար բանաստեղծը տվյալ դեպքում իսկապես գրում է իր մասին և հայտնում ինքնակենսագրական կարևոր տեղեկություն: Վերջին հատվածում չափազանց կարևոր է «իմ է առակս» պարզ նախադասությունը, որը աշխարհաբար պետք է հնչի «իմն է առակը», այսինքն՝ իր հորինածն է: Յավոք, այդպես չեն հասկացել Մատյանի աշխարհաբար թարգմանիչները, որովհետև չեն կարծել, որ Նարեկացին Մատյանում կարող էր **անձամբ հորինել առակներ**: Ու որովհետև այդպես չեն մտածել, ուստի թե «իմ է առակս» և թե «առ իս ակնարկէ» դատողությունները հասկացել և մեկնաբանել են որպես իրեն վերաբերող նույնական մտքեր: Ըստ այդմ, Թորգոմ Գուշակյանը դրանք թարգմանել է՝ «ինձի կը յարմարի ... եւ կակնարկէ ինձի», Սկրտիչ Խերանյանը՝ «ինձ համար է..., ինձ են ակնարկում», իսկ Վազգեն Գևորգյանը, հավանաբար զգալով նախորդների թարգմանության անճշտությունը և նրանց կրկնաբանությունից ազատվելու համար, այդ երկուսը միացրել և թարգմանել է՝ «ինձ է պատշաճում»: Բնականաբար գրեթե նույնն ենք տեսնում նաև ռուսերեն (հավանաբար և այլ լեզուներով) թարգմանություններում: Բնավ նպատակ չունենալով ծանրանալու դրանց վրա՝ հարկ են համարում բերել միայն բնագրին ամենահարգատ ռուսերեն թարգմանության մեզ հետաքրքրող երկու տողը.

*Днесъ, поелику **обо мне** сей пример укоряющий,  
То указывает он на несчастья **мои** и беды опасныя*<sup>17</sup>

(ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Ինչպես տեսնում ենք, «իմ է»-ն ռուսերեն բարգմանված է “**обо мне**”, որը հայերեն կթարգմանվի «իմ մասին է»: Այնինչ բանաստեղծը ոչ թե ասում է իմ մասին է, այլ «իմ է», այսինքն՝ իմն է: Տարօրինակ է, որ մի կողմից բոլոր նարեկացիագետները իրավամբ ասել ու պնդում են, որ հայոց լեզվի «ամենաշոշալ սերմնացան» ու «բարձրարվեստ ճարտարապետ» Գրիգոր Նարեկացին հատկապես Մատյանում դրսևորել է բառի բացառիկ զգացողություն և ճշգրտագույն գործածություն՝ առավելագույնս խուսափելով բառերի անհարկի կրկնությունից և ավելորդաբանությունից, իսկ մյուս կողմից, անուշադիր գտնվելով նրա բառագործածության հանդեպ, «իմ է» և «առ իս» արտահայտությունները ընկալվել են մույն իմաստով: Կարծում են, եթե Նարեկացին ցանկանար ասել «իմ մասին», կգտներ ասելու ավելի պարզ ձև: Ասվածի լավագույն հաստատումը կարող ենք տեսնել Մատյանի ակադեմիական հրատարակության ԾԳ բանի 60-րդ տողում. «**Իմովս վասն իմ առ իմ** փրկութին, **ի դէմս իմ**»: Ինչպես տեսնում ենք, բանաստեղծն ընդամենը մեկ տողում **իմ** բառը գործածել է չորս տարբեր առումներով՝ ոչ մեկը չնույնացնելով մյուսի հետ:

Որ իսկապես բանաստեղծը «իմ է առակս» և «առ իս ակնարկէ» ասելով արտահայտել է տարբեր իմաստներ, երևում է նաև առակս բառին հաջորդող «վերջին կշտամբողական» արտահայտությունից: Բանն այն է, որ իր ստեղծած առակից առաջ, վկայակոչելով Դավթի սաղմոսի բազմաթիվ մտքեր, որոնք մույնպես համարում է առակներ, հանգամանորեն անդրադառնում է քառասունիններորդ սաղմոսի վերջին հատվածին՝ անվանելով այն «բանի յանդիմանողի»: Իսկ քանի որ հանդիմանական և կշտամբողական բառերը իմաստով շատ մոտ են իրար և կարող էին թյուրըմբռնման տեղիք տալ, ուստի կշտամբողական բառից առաջ դրել է **վերջին** բառը, որպեսզի հստակ հասկացվի, որ խոսքը վերաբերում է ոչ թե 49-րդ սաղմոսի հանդիմանողական մտքին, այլ իր իսկ հորինած կշտամբողական առակին, որը գետեղված է այդ ենթագլխի վերջում:

Նարեկացու այս առակը հետաքրքրական է մեկ այլ տեսակետից ևս. ինչպես տեսանք, նախ պատմվում է առակը, իսկ ապա մեկնվում նրա իմաստը, այսինքն՝ բանաստեղծը շատ պարզ ու որոշակի ասում է, որ տվյալ առակը խորհրդանշում է իր հետ պատահած դառն իրողությունը: Իսկ եթե հիշենք, որ ըստ Մ. Աբեղյանի «Մխիթար Գոշն առակների մեջ տեսնում է բնականաբար երկու մաս. բուն պատմվածքը և խրատական եզրակացությունը»<sup>18</sup>, ապա կարող ենք ասել, որ ճիշտ մույնն ենք տեսնում նաև Նարեկացու մեզ հետաքրքրող առակում: Դիտելի է մեկ պարագա ևս. մեկնության մեջ բանաստեղծն ասում է, որ տվյալ առակն «առ իս ակնարկէ»:

<sup>17</sup> **Григор Нарекаци.** Книга скорбных песнопений. Перевод с древнеармянского и комментарий М. О. Дарбинян-Меликян и Л. А. Ханларян. Вступительная статья С. С. Аверинцева, М., 1988, с. 193.

<sup>18</sup> **Մանուկ Աբեղյան,** նշվ. աշխ., էջ 187:

Գոշի առակներից միայն մեկում է (Կգ) գործածվում **ակնարկություն** բառը, բայց, ինչպես արդեն ասել ենք, նրա առակները իրեն չեն վերաբերում, իսկ Նարեկացու առակները վերաբերում են հենց իրեն: Ըստ այդմ Գոշը գրել է. «Ակնարկութիւն առակիս այսպէս է»:

Բացի վերը բերվածներից՝ Մատյանում, իմ կարծիքով, կա ևս մեկ առակ. ԿԱ բանում կարդում ենք.

*Քանզի գոր առիմակ տատանին տագնապաւ տերեւ տնկոց  
եղելին ծառոց,*

*Շարժեալք ի հողոնց ուժգին բախելոց՝ հոսեալք ի խոնարհ,  
Այնպէս ջանացաւ ջարդել զընթացից իմոց վերարձակութիւն,  
Քաջաբեր ուղէշս՝ գյարմարեալս ձեռամբ անեղ մշակիդ:*

Բերված հատվածի առաջին երկու տողում բանաստեղծը պատկերավոր նկարագրում է ուժգին հողմից շարժվող եղևնի ծառի տագնապահար տերևների վայր թափվելը, այսինքն՝ դա առակի պատմողական մասն է: Հաջորդ երկու տողում գործ ունենք առակի մեկնողական մասի հետ. այստեղ բացատրվում է, որ վայր թափվող տերևների պես թշնամին, չարը ջանաց ջարդել իր վերասլաց ընձյուղները: Ըստ այդմ, շարունակության մեջ նորից հաստատելով իր հետ կատարվածը, Տիրոջից խնդրում է կենաց անդաստանում վերահաստատել իրեն՝ «նոր պտղաորութեամբ անապականաւ»:

Իսկ ինչի՞ց է երևում, որ խնդրո առարկա հատվածը իսկապես առակ է իր երկու մասերով հանդերձ: Նախ բանաստեղծն առաջին տողի սկզբում ասում է «գոր առիմակ»: Ինչպես գիտենք, **օրիմակ** բառը որպես առակի հոմանիշ գործածել է նաև Մխիթար Գոշը: Դեռևս Մ. Աբեղյանն է նկատել, որ Գոշը պատմվածքը «կոչում է **առակ, գաղափար, օրիմակ, եղանակ** և այլ բառերով»<sup>19</sup>: Ավելի ստույգ լինելու համար ասենք, որ իր 190 առակից 170-ում Գոշը գործածում է **առակ** բառը, 10-ում՝ **օրիմակ**, 4-ում՝ **եղանակ**, 3-ում՝ **նշանակ**, մեկական դեպքում՝ **գաղափար** և **ապացույց**, իսկ 1-ում ընդհանրապես ոչինչ չի անվանում, որովհետև չունի մեկնություն (տե՛ս ԾՁԸ առակը): Երկրորդ, առակն ունի նաև մեկնողական մաս, որի վկայությունն են «այնպէս ջանացաւ» բառերը, այսինքն՝ բանաստեղծն ասում է, որ ինչպես ուժգին հողմը վայր է թափում եղևնու տագնապահար տերևները, այնպես էլ թշնամին ջանացել է ջարդուփշուր անել իր վերասլաց ընձյուղները:

Դիտելի է մեկ այլ պարագա ևս. Նարեկացին փորձել է առակները տարբերակել ըստ իրենց բնույթի ու նպատակի: Ըստ այդմ, ընդունում է **կշտամբողական** («առակս վերջին կշտամբողական»), **հանդիմանական** («յանդիմանութեանն առակի»), **հեզմական** («հենգնաւոր առակագրութեամբ»), **ուսուցողական** («առակ ընչեղին ինձ վարդապետէ»), **ապագային** միտված («առակ ապառնեացն»), **պատմողական** («ի յայտնութեանն իբրև առակաւ պատմաբանեցար ի տեսողէն, զանցեալսն իբրև գապառնիս նշանակեալ») և այլ բնույթի առակներ: Երբեմն **առակել** բառը գործածում է նույնիսկ որպես գրելու, նկարելու կամ հայտնելու հոմանիշ: Օրիմակ, «Ի սուրբն Յակոբ» ներբողում, աշխարհը մանենցնելով ծփացող ծովի, բացառիկ պատկերավորությամբ նկարագրում է ծով-իրականության հարափոփոխ

<sup>19</sup> Նույն տեղում:

վիճակը՝ ի մասնավորի գրելով. «**Չփոփոխումն էիցս առակեն, զխաղացումն ժամանակացս յայտնեն, զասանումն աուրց նկարեն, զանցաորացս բարձումն գրեն**»<sup>20</sup> (ընդգծ. իմն է - Հ. Մ.):

Առակի վերը թվարկված տեսակները, անշուշտ, հանդիպում են նաև Գոշի առակներում, բայց վերջիններս լինելով քանակապես անհամեմատ ավելին, այժի են ընկնում նաև բնույթի բազմազանությամբ: Բացառված չէ, որ Մխիթար Գոշը առակներ գրելու մղում ստացել է հենց Գրիգոր Նարեկացու Մատյանից, որին, ինչպես ցույց ենք տվել մեր նախորդ հոդվածներից մեկում, ոչ միայն եղել է քաջածանոթ, այլև օգտագործել է բանաստեղծի ստեղծած մի շարք նոր բառեր<sup>21</sup>:

Կարծում են՝ վերը շարադրվածը լիովին հիմք է տալիս եզրակացնելու, որ Գրիգոր Նարեկացին թե՛ իր գրական ողջ ժառանգության մեջ և թե՛ «Մատենանոցի երկերգութեան» երկում լայնորեն օգտվել է առակագրության ժանրից և մեծապես նպաստել դրա տարածմանը մեզանում: Ավելին, բանաստեղծը Մատյանում անձամբ փորձել է ստեղծել մի քանի նոր առակ՝ դրանով իսկ հայ գեղարվեստական գրականության մեջ սկիզբ դնելով չափածո առակագրությանը: Վերջապես, նա է ստեղծել **առակագրություն** եզրույթը: Հետևաբար, ճիշտ կլինի այսուհետև հայ գրականության մեջ առակագրության ժանրի սկզբնավորման հարցը քննարկելիս հաշվի առնել նաև վերը նշված փաստերը:

#### **Г. К. МИРЗОЯН – Григор Нарекаци и армянское баснописание. –**

В статье делается попытка пересмотреть давно укоренившееся в арменоведении мнение о том, что армянская оригинальная басня берет свое начало в XII веке. На основе тщательного изучения литературного наследия Григора Нарекаци и особенно «Книги скорби» автор статьи показывает, что великий поэт уже в X веке пользовался богатой сокровищницей басенного жанра и существенно расширил границы литературного бытования басни, превратив ее в средство иносказательной передачи автобиографических сведений. Более того, армянский поэт разработал целый ряд теоретических вопросов, касающихся жанра басни, ввел сам термин «баснописание», а также создал несколько басен в стихах. Исходя из всего этого, автор заключает, что если Мхитар Гош в XII веке дал начало армянской прозаической басне, то Григор Нарекаци двумя веками раньше заложил основу стихотворной армянской басни. Отсюда следует, что история становления оригинальной армянской басни начинается с X века.

<sup>20</sup> Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, էջ 446:

<sup>21</sup> Այդ մասին մանրամասն տես՝ **Հ. Ղ. Միրզոյան**, Նարեկացու լեզվական ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 1, **նույնի՝** Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը, Եր., 2006, էջեր՝ 66-67, 76: